
CHECKONOMICS

Նոյեմբեր 2026 | N° 1

ԿԱՐՈ՞Ղ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԿՈՆՅԱԿԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿՐՃԱՏՎԵԼ 50%-ՈՎ

Հայկական կոնյակի Ռուսաստան արտահանման նվազման սցենարային գնահատում




Նշում՝ η՝ գնային առաձգականություն: Գրաֆիկում ներկայացված են դիտարկված ինը սցենարներից երեքը՝ ցածր, միջին և բարձր ազդեցությամբ: Կետերը աջից ձախ՝ ցածր (սահմանային գնի կշիռ 19%, η = −0.54), միջին (26%, -0.70), բարձր (34%, -0.80): Աղբյուր՝ World Bank, Armstat, Nelson (2013), Wagenaar, et al. (2009), ACSES հաշվարկներ

Վատթարագույն սցենարի դեպքում հայկական կոնյակի արտահանումը Ռուսաստան կարող է նվազել 5.1%-ով

Հոկտեմբերի 20-ին Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամները ներկայացրել են զեկույց Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) Հայաստանի անդամակցության կասեցման հնարավոր հետևանքների մասին: Զեկույցի համաձայն՝ ԵԱՏՄ-ից Հայաստանի դուրս գալու դեպքում Հայաստանից ԵԱՏՄ անդամ երկրներ ալկոհոլային խմիչքների արտահանումը կարող է կրճատվել մինչև **50 %-ով**:

Զեկույցի հիմքում դրված ենթադրություններից մեկն այն է, որ ԵԱՏՄ-ից դուրս գալու դեպքում **Հայաստանը կշարունակի մնալ ԱՊՀ անդամ**: Այդ սցենարում Հայաստանի և Ռուսաստանի միջև կշարունակի գործել ԱՊՀ ազատ առևտրի համաձայնագիրը, հետևաբար Ռուսաստանը Հայաստանից ալկոհոլային խմիչքների ներմուծման համար մաքսատուրք չի կիրառի: Ուստի արտահանման վրա ազդեցությունը գնահատելու համար կարևոր է պարզել, թե ԵԱՏՄ-ից դուրս գալու դեպքում **ոչ սակագնային միջոցներն** ինչ լրացուցիչ ծախսեր կառաջացնեն հայաստանյան արտահանողների համար և ինչքանով դա կարող է ազդել ռուսական շուկայում վաճառվող հայկական ալկոհոլային խմիչքների գնի և սպառման ծավալների վրա:

Հայաստանից Ռուսաստան կոնյակի արտահանումը 2025 թվականին



Աղբյուր՝ Արմստատ

Ռուսաստան արտահանվող հիմնական հայկական ծագման ալկոհոլային խմիչքը կոնյակն է: 2025 թ-ին Հայաստանից Ռուսաստան արտահանվել է մոտ **27 մլն լիտր** 100% սպիրտին համարժեք ծավալով կոնյակ: Դրա մոտ **48%-ը կազմել են** 2 լիտր կամ պակաս տարողությամբ շշերով խմիչքները, իսկ 51%-ը՝ կոնյակի սպիրտը, որի մոտ կեսը չունի տեղական ծագում և կարող է խոցելի լինել նոր իրավիճակում: Սակայն, դրա ազդեցությունը Հայաստանի խաղողագործության արժեշղթայի վրա կլինի չեզոք:

Համաշխարհային բանկի գնահատմամբ՝ Ռուսաստանի կողմից կոնյակի և խաղողից ստացված այլ թրմօղիների (ԱՏԳ ԱԱ 220820), ներմուծման նկատմամբ կիրառվող **ոչ սակագնային միջոցների արժեքային համարժեքը** (ad valorem equivalent, AVE) կազմում է 4.3% (տեխնիկական) և 3.6% (ոչ տեխնիկական), միասին՝ **մոտ 8%**: Արժեքային համարժեքը ցույց է տալիս, թե այդ միջոցների հետ կապված ծախսերը, օրինակ՝ փաստա-

ACSES
ARMENIAN CENTER FOR SOCIO-ECONOMIC STUDIES

CHECKONOMICS

Հայկական կոնյակի արտահանման 50%-ով նվազելու համար ռուսական խանութներում դրա գինը պետք է աճի 2.4-3.6 անգամ

թղթերի ձևակերպման, հավաստագրման և մակնշման ծախսերը, ապրանքի՝ սահմանին ունեցած գնի քանի տոկոսն են կազմում: Համաշխարհային բանկի գնահատականը վերաբերում է տվյալ ապրանքի՝ Ռուսաստան ներմուծմանն ընդհանուր առմամբ: Հայաստանից ներմուծման համար առանձին գնահատական չկա, ուստի վերլուծության մեջ դիտարկել ենք նաև **15%** և **20%** արժեքային համարժեքներով սցենարներ: Միևնույն ժամանակ մեր դիտարկումները ցույց են տալիս, որ նույնիսկ ԵԱՏՄ անդամ լինելով ներկայումս Հայաստանից կոնյակ արտահանողները բախվում են տարբեր ոչ սակագնային խոչընդոտների:

Արտահանման գնի բարձրացման ազդեցությունը հայկական կոնյակի պահանջարկի վրա կախված է նրանից, թե **որքանով է այդ թանկացումը փոխանցվում մանրածախ գնին**: Մանրածախ գինը ներառում է նաև ակցիզային հարկը, ԱԱՀ-ն, ինչպես նաև ներմուծող-դիստրիբյուտորի և մանրածախ վաճառողի մարժան, ուստի սահմանային գինը կազմում է մանրածախ գնի միայն մի մասը: **Շշալցված, երկու լիտրից փոքր տարաներով կոնյակի** (ԱՏԳ ԱԱ 2208 20 120) արտահանման քանակի և արժեքի, ինչպես նաև մոսկովյան սուպերմարկետներում հայկական կոնյակի գների հիման վրա կատարված հաշվարկներով սահմանային գինը կազմում է մանրածախ գնի մոտ 19–34%-ը: Հաշվարկում դիտարկում ենք երեք սցենար՝ **19%, 26%** և **34%**: Յուրաքանչյուր սցենարում սահմանային գնի աճն ամբողջությամբ փոխանցվում է մանրածախ գնին:

Գնի բարձրացման ազդեցությունը սպառման վրա գնահատելու համար կարևոր է հաշվի առնել տվյալ ապրանքի պահանջարկի **գնային առաձգականությունը**: Այն ցույց է տալիս, թե գնի 1% բարձրացման դեպքում սպառման ծավալը որքանով է փոխվում՝ այլ հավասար պայմաններում:

Հաշվարկներում կիրառել ենք առաձգականության երեք գնահատական՝ **–0.54**, **–0.7** և **–0.8**: Առաջինը և երրորդը վերաբերում են թունդ ալկոհոլային խմիչքներին և ներկայացված են համապատասխանաբար Nelson-ի (2013) և Wagenaar-ի ու համահեղինակների (2009) ուսումնասիրություններում: Երկրորդը՝ –0.7-ը, միջանկյալ արժեք է այս երկու գնահատականների միջև: Այս գնահատականներով՝ գնի 1% աճի դեպքում սպառման ծավալը նվազում է համապատասխանաբար մոտ 0.54%, 0.7% և 0.8%-ով:

Դիտարկված **միջին սցենարում**, երբ արտահանման ծախսերն աճում են 15%-ով, Հայաստանից Ռուսաստան շշալցված կոնյակի (ԱՏԳ ԱԱ 2208 20 120) **արտահանման ծավալը կարող է նվազել 1.5–3.9%-ով** (ըստ մեր երեք սցենարների համադրության՝ արտահանման գնի կշիռը ռուսական խանութների մանրածախ գներում՝ 19%, 26%, 34%, գնային առաձգականությունը՝ –0.54, –0.70, –0.80): Այս գնահատականի հաշվարկում ներառում ենք միայն **սպառման արձագանքը գնի բարձրացմանը** և ենթադրում ենք, որ մյուս պայմանները մնում են անփոփոխ: Ռուսաստանում սպառողների եկամուտների նվազումը կամ նախասիրությունների փոփոխությունը նույնպես կարող են ազդել հայկական կոնյակի պահանջարկի և, հետևաբար, արտահանման ծավալի վրա: Այդ գործոնների ազդեցության գնահատումը դուրս է այս վերլուծության շրջանակից: Դիտարկված ինը սցենարներից ցածր ազդեցությամբ սցենարի դեպքում, երբ արտահանողների ծախսերն աճեն 8%-ով, արտահանման ծավալը կնվազի 0.8–2.1%-ով, իսկ վատթարագույն սցենարի դեպքում՝ ծախսերի 20% աճի պայմաններում՝ 2.0–5.1%-ով:

Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ արտահանման ծավալը 50%-ով նվազելու համար, հայկական **կոնյակի գինը ռուսական խանութներում պետք է աճի 2.4-3.6 անգամ**՝ կախված պահանջարկի գնային առաձգականությունից: Մինչդեռ ըստ մեր դիտարկած վատթարագույն սցենարում կոնյակի մանրածախ գինը կարող է աճել առավելագույնը 6.8%-ով:

ACSES վերլուծական կենտրոն
Հասցե՝ Երևան, Նալբանդյան 48/1
Հեռախոս՝ (+374 33) 200 882
Կայք՝ www.acses.am
Էլ. փոստ՝ info@acses.am